

ԲԱՆԱԶԵՎ N° 20-29,159

ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱԶԵՎ, ՈՐՈՎ  
ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է 2020 Թ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԾԱԽՍԸ

ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բըրբենքի Քաղաքային օրենսգրքի Բաժին 2-3-143-ի համաձայն, Բըրբենք քաղաքի (Քաղաք) ցանկացած ընտրովի պաշտոնում առաջադրվող յուրաքանչյուր թեկնածու կարող է պատրաստել թեկնածուի հայտարարություն և ուղարկել այն Քաղաքի Գործավարին:

2. Ա. Ըստ Ընտրական իրավունքի մասին դաշնային Օրենքի, Քաղաքը պարտավոր է տպել Քվեաթերթիկի բազմալեզու օրինակ (անգլերեն, իսպաներեն, հայերեն, և թայ): Քաղաքի Գործավարին յուրաքանչյուր թեկնածու կողմից ներկայացված հայտարարության անգլերեն ու իսպաներեն տարբերակների համար Քաղաքը չի վճարի. այդ ծախսը լիովին կստանձնի թեկնածուն ինքը: Քաղաքը կթարգմանի ու կտպի բոլոր թեկնածուների հայտարարությունները հայերեն ու թայ լեզվով՝ այդ թեկնածուների համար անվճար:

Բ. Այն թեկնածուն, որը ցանկանում է, որ իր հայտարարությունը թարգմանվի հայերենից ու թայ լեզվից գատ մեկ այլ լեզվով ևս, պետք է վճարի դրա ողջ ծախսը, ներառյալ թեկնածուի հայտարարության տպագրությունը, տեղափոխումը, կազմակերպումը, թարգմանությունը, առաքումն ու էլեկտրոնային տարբերակով տարածումը:

Գ. Թեկնածուի գրավոր դիմումի դեպքում, Քաղաքի Գործավարը կգնահատի թեկնածուի հայտարարության տպագրության, տեղափոխման, կազմակերպման, թարգմանության, առաքման ու էլեկտրոնային տարբերակով տարածման ծախսն ու կպահանջի, որ հայտարարություն ներկայացնող յուրաքանչյուր թեկնածու մուծի իրենից հասանելիք ծախսաբաժնի կանխավճարը՝ իբրև Քվեաթերթիկի օրինակում իր հայտարարությունը ներառելու պայման: Ընտրությանը հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում, Քաղաքի Գործավարը յուրաքանչյուր թեկնածուին ծախսահաշիվ կներկայացնի կանխավճարի գումարից անդին կատարված որևէ ծախսի համար, կամ կվերադարձնի կանխավճարի գումարի չծախսված մնացորդը: Թեկնածուի հայտարարությունը չի ներառվի Քվեաթերթիկի օրինակում, այդ թեկնածուն իրենից հասանելիք ծախսաբաժնի կանխավճարը ժամանակին չի մուծել: Այդուհանդերձ, եթե,

համաձայն Բըրբենքի Քաղաքային օրենսգրքի Բաժին 2-3-144-ի, թեկնածուն համարվում է չունևոր, ապա Քաղաքի Գործավարը կտպի հայտարարությունն ու փոստով կուղարկի այն՝ չպահանջելով, որ չունևոր թեկնածուն կանխավճար մուծի:

3. Առաջադրման փաստաթղթերի հրապարակման պահին, Քաղաքի Գործավարը յուրաքանչյուր թեկնածուի կամ թեկնածուի ներկայացուցչի կտրամադրի Բըրբենքի Քաղաքային օրենսգրքի Բաժիններ N°N° 2-3-143-ի և 2-3-144-ի, ինչպես նաև այս Բանաձևի պատճենները:

4. Սույնով չեղարկվում են թեկնածուների հայտարարությունների համար կատարվելիք մուծումների մասին Քաղաքային խորհրդի քաղաքականությունը սահմանող նախկին բոլոր Բանաձևերը:

5. Այս Բանաձևը վերաբերում է 2020 թ. նոյեմբերի 3-ի Քաղաքային ընդհանուր ընտրություններին, և վերը շարադրված կարգով նշված Ընտրությունների նպատակով թեկնածուների կողմից հայտարարությունների հրապարակումից ու դրանց ծախսի դիմաց մուծումների կատարումից հետո դրա հետագա ուժն ու կիրառելիությունը կհամարվեն սպառված:

ԱՆՅԵԼ և ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 2020 թ. հունիսի 23-ին:

ս/Շերոն Սփրինգեր  
Շերոն Սփրինգեր (Sharon Springer)  
Քաղաքապետ

Ընդունված է ըստ կարգի.  
Քաղաքի Փաստաբանի գրասենյակ

Վկայում եմ.

ս/Զիզեթ Մուլինզ  
Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC  
Քաղաքի գործավար

Ում կողմից. ս/Էյմի Ալբանո  
Էյմի Ալբանո (Amy Albano)  
Քաղաքի Փաստաբան

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳ )  
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՌԻՆԹԻ ) սս.  
ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔ )

Ես, Բըրբենք քաղաքի Գործավար Զիզեթ Մուլինզս, MMC, սույնով վկայում եմ, որ վերը նշված Բանաձևը պատշաճ և կանոնավոր կերպով անցել ու ընդունվել է Բըրբենք քաղաքի Քաղաքային խորհրդի կողմից, 2020 թ. հունիսի 23-ին գումարված կանոնավոր նիստին, ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

ԱՅՈ. Ֆրութոս (Frutos), Գեբլ-Լադդի (Gabel-Luddy), Թալամանթես (Talamantes) և Սփրինգեր (Springer):

ՈԶ. Չկա:

ԲԱՑԱԿԱ. Չկա:

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ. Մըրֆի (Murphy):

ա/Զիզեթ Մուլինզ

Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC, Քաղաքի Գործավար